Մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Դաշտաքարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կենսաբանության (12 դասաժամ), քիմիայի (8.5 դասաժամ), երաժշտության (3 դասաժամ), կերպարվեստի (1 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

ՈՒսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողություններին ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր(հանրակրթական առարկայական ուսումնական ծրագրերին համապատասխան) և հարցազրույց (մանկավարժական մասնագիտական գործնական հմտություններ):

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև -1)

1. բարձրագույն կրթության մանկավարժության որակավորման աստիճանը հավաստող ավարտական փաստաթուղթ (դիպլոմ), կամ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական կամ ուսուցչական գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժը հաստատող քաղվածք աշխատանքային գրքույկից,
2. անձնագրի պատճեն,
3. ինքնակենսագրություն (Ձև -4),
4. թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հաստատող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները դրանց առկայության դեպքում,
5. մեկ լուսանկար՝ 3x4 չափի ,
6. այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են 2022թ. օգոստոսի 31 -ից մինչև սեպտեմբերի 13-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից մինչև 14:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **2022թ. սեպտեմբերի 19 -ին, ժամը 15^{00}-ին**, ՀՀ Արարատի մարզի Դաշտաքարի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Դաշտաքար 2-րդ փողոց 2:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 077-00-25-86 հեռախոսահամարով: